69. ԴԱՐՉԻՆ ԵՎ ԻՐԵՔ ՉԱՐԵՔ

Վախտին մեկ իրիկ կնիկ մի կէղնին, կնիկ ճախրակ մանելով՝ իրիկ ցախ բերելով՝ կոկ խալավ մի չտեսան ուրանց վերեն ու չը-խազան։ Էն մեկ օր նստան, կնիկ իրկան ասաց.

— Մեր խալ ի՞մալ կէղնի. հ՝ելի էրթանք ղուրպաթ՝ տեսնինք աստված մեղի ի՞նչ պիտի տա։

— Կնիկ, էսօր էրթամ սար, քիչ մի ցախ կոտրտիմ, բերեմ։

Գնաց մեկ բանձրը կոճի մի վերեն կայնավ. կանչեց աստված, կացին էղարկ էդ կոճին։ Կոճ ճղավ, մեջեն պստիկ տղե մի դուս-հ՝ելավ։ «Փառք իմ քու տված օղորմութենեն, աստված, էս քառսուն տարի է կարգըվեր էի, աստված ձի տղե մի էտուր», ասաց։ Վերուց տղեն, առավ էկավ տուն։

Իրեք խատ եղվընեկ թռան, նստան փանճարի վերեն, ասին.— Այ մա՛րդ, էդ տղի անուն չես դներ, փո՛, հա մենք էկանք։

Եղվընկներ թռան, դացին, հարի ասսնուխինդ օրը էկան։

Կնիկ նստավ, ասաց.—Մա՛րդ, եղվընկներ գո՛ էկան։

— Բարով, խըղար բարով թըխ հ՝իգան։ Եղվընկներ մտան ներս։ Էս մարդու անուն Հ՝ովհաննես, կնկան՝ Փիրոզ էր։

— Կնի՛կ, էկան եղվընկներ, մեր սարի տղին, գո օր բերիր իմ անուն կը դնին։

— Այ Հ՝ովհաննե՛ս, քու տղին անունը Դարչին կը ղնիմ։

— Օր Դարչին է, էդոր մեջքը գետին ղարկող չէղնի,—ասաց էն մեկելը։

— Օր Դարչին է, օր տղամարդ ա, Ջինիմաչինա աղջիկ էդոր նշանած ու ղսմաթ էղնի,— ասաց էն մեկելն էլ։

Խալիվորը տեսավ ինք շոշրցեր է, էլ բան չկանա էներ, կնիկ ճախրակ չկանա մաներ։

Կնիկ ասաց.— Մարդ, էս քառսուն տարի է մեզի տղա չէր էղեր էր, հ'եսով հետ մենք տղեն հ'ի՞նչ կէնենք. հ'ելի տար տո՛ւր թագավորին, օր մեզի բրռ մի ղրրոշ տա, մեր իտարեն էնինք, չուր մեռնինք։

Մարդն էր, հ'ելավ գնաց, տղեն էտուր թագավորին։ Թագավորն էր, բերեց տղան էդիր կշեռք, մեկ թայն էլ ղրոշ, տվեց խալիվորին։ Առավ գնաց տուն։

— Կնի՛կ, տարա տվեցի՝ գո էս ղտար ղրոշ բերեցի։

Տղեն մնաց թագավորի մոտ, թագավոր ասաց.— Փառք քեզ, աստվա՛ծ, ձի մեկ տղա կեր, մեկ էլ էն, կէղնի էրկու տղա։

Հ'իրիկուն թագավոր առավ տղեն, գրկեց, գնաց տուն, ուր շորեր էխան. տղեն ուր փողպրտեն թալեց ցած, էրաց ուրին խոգու տղա։

Կանչեց կնկան.— Կնիկ, դու էլ արի քո փողպրտեն ցած թալե, օր էնիք խոգու տղա։—էն էլ թալեց։

Տղեն ջոջրցավ, ճանփեցին վարժարան. խըլխի տղեկներ թե օրեն մե թուղթ կարդեյն, էդ տղեն օրը հինգ թուղթ կը կարդեր։ Համա տղեն շա՞տ չար էր։

Մեկ օր էլ մեկ աղքատ պառվու մի տղա՝ գո էդ վարժարան կը կարդեր։ Էդ Դարչին բռնեց էդ պառվու տղի ձեռնեն, քաշեց, տեղացեն քանդեց։ Վարժապետ գնացեր էր շուկեն։ Էկավ, ճուապ տարան ուրան, թե Դարչին պառվու տղի թևը քանդեր էր։

Վարաժպետ հերսոտավ Դարչինի վերեն, ասաց.— Տղեկնե՛ր, ֆալախան դնեք։ Տղեներու ո՛րը գնաց, չկարցավ դներ։ Վարժապետ ինք գնաց օր դներ. Դարչին ձեռ թալեց պիլակ[1] բռնեց, քաշեց ձեռ քանդեց. էրեր։

Վարժապետ հ'լավ ճուապ ճանփեց թագավորին. «Քո՛ւ գլոխ էլ պիտի ուտե քու տղեն. տղեկներու թևը հ'ըմեն քակեց, իմ թևն էլ քակեց»։

Թագավոր լսեց, շատ հերսոտավ.—Դարչին, էդ հ'ի՞նչ բան ա դու կէնիս։

— Թագավոր սաղ մնա, ես ի՞նչ եմ էրեր եմ։

Տեսավ էդ աղքատ պառավ էկավ մտավ տուն. ասաց.— էդի բիճ ա, պախեր ես։

---

1 Դաստակ (Մ. Բ.)։

Դարչին հ'իմցավ, օր ինք թագավորից չէ, հերստավ, հ'ելավ, էլ չմնաց թագավորին մոտ, ճանփան էտուր հ'առեջ, գնաց։ Գնաց իշկեց օր մեկ խալիվոր նստեր ա իրեք ճանփու բաժին։

— Բարի լուս, խալիվոր։

— Աստուծո բարին, անցավո՛ր։

— Էսա ճամբխըներ ի՛նչ ճանբախ ա։

— Դարչի՛ն, էս ճանբախ գնացող կուգա, գո՛ էս մեկել ճամբախն էլ ախտ ու բաղդ ա, օր էրթան, յա հ'իգան, յա չիգան. էն մեկ ճանրախ էլ որն օր գնացեր ա՝ չէկեր ա։

— Խալիվոր, ես կէրթամ էս ճամրխով օր գո կէրթա՛մ, չեմ հ'իդար։

Տղեն գնաց, շատ գնաց, քիչ գնաց, գնաց սարի մի գլոխ, արև ըռահագավ վերեն։

Դարչին շատ նեղեցեր էր, փշուր մի մեղբեմոմ կար ճեպ, չախմախ էղարկ. ինչ էրավ, չի կպավ. հ'ելավ բանձրը քարի մի գլոխ, տեսավ օր մոտ տեղ կրակ կը վառի, հ'ելավ, գնաց կրակի մոտ, իշկեց օր քառսուն խատ դև նստած են կրակի բոլոր, օսկի խնձոր մի առածին ձեռներ, էն կը թալե էնոր, կասե. «Իրեք Զարեքի հ'եշխին», էն կը թալե էնոր, կասե՝ «Իրեք Զարեքի հ'եշխին»։

Դարչին էլ հիշաց աստված, ձեռ թալեց քառսուն կանթե պըղինձ, վերուց, էդիր մեկ տեղով, էդ քառսուն դևեր զարմացան։

— Մենք քառսուն աղբեր՝ անճախ վերուցինք. էս մեկ տղե մի իմա՞լ վերուց, էդիր էն տեղ։

— Դու ի՛նչ մարդ իս, օր մեր կերակուրը վերուցիր, դրիր էնդի, հում մնաց, մնացինք անոթի, նե՛ բարև տվեցիք, նե՛ բարի լուս։

— Աղբեր,— ասաց Դարչին,— բարի լուս ձեզի, բարի լուս ձեզի, բարի լուս ձեզի։— Վերուց պղինձը էդիր վըր կրակին, դարձավ դևերաց.— է՛յ, աղբրտանք, դու ի՞նչ մարդ իք։

— Մենք քառսուն դև,.քառսուն էլ աղբեր ենք. մենք քառսունի քու պստիկ, դու մեր ջոջ աղբեր։

— Դե՛,—ասեց,—էդ խնձորը հ'ի՞նչ խնձոր էր օր դու թալիք իրարու։

— Էս պղինձ պիտի էփի օր ուտենք, էրթանք բերենք Իրեք Զարեքին, օր Չինաստանի թագավորի աղջիկն է։

— Զոռո՞վ, չէ՞ խաթրով։

— Ցերեկը ղարաղոլ կայնուկ է դռան վերեն, գիշերն էլ գազտուկ գազան է կայնած, հ'ի՛նչ կէնենք, չենք կանա բերեր։

— Ձեր մեշ դարբին կա՞։

— Կա՛ւ

— Քառսուն խատ սքթա սուքեցեք ձի։

Սուքեցին, հ՝ելան տվին ճանբախ հ՝առեջ, գնացին, գնացին, գնացին Ջինիմաչինի պետնի տակ կայնան։

Դարչին ասաց գևերու ջոջ աղբոր.— Արի՛ էս սքթեք զարկ, տեսնանք իմալ կը շարիս, էլլիս։ Ջոջ աղբերն էր՝ մեկ թոխմախմ օր էղարկ ըռնկուն գնաց խասավ գեոր։ Դարչին էր, մեկ սիլլե մի տարավ էրեր էզարկ ջոջ աղբոր վիզ, օր ծռավ, ինք առավ սքթեք, մեկ-մեկ գոմբով շարեց. հ՝ելավ պատնի գլոխ, իշավ գևերու մոտ։

— Աղբրտի՛ք,— ասաց,—մեկ-մեկ պստիկ քար բերեք ձի. ես կելլեմ պատի գլոխ, մեկ-մեկ քար օր թալեմ, մեկ-մեկ կելլեք վերև, օր էրկու-էրկու հ՝ելաք, ձեր շոջ կտոր ձեր ականշ կը թորկեմ։

Մեկ-մեկ քար թալեց, մեկ-մեկ հ՝ելան. քառսունի գլոխ լե կտրեց. քառսունի ականշնե լե կտրեց. էդիր խոյտան[1], Դարչին իշավ ցածր սքթեք քաշեց, հ՝ելավ պետնի գլոխ, էնդին սքթեք շարեց իշավ թագավորի բակը. գնաց դուռ մի էբաց. իշկեց օր Իրեք-Ջարեք պարկած էր. խանեց ուր մատնիք, մտուց Իրեք-Ջարեքի մատ։ «Էս իմ նշանածը էղնի», ասաց։ Իրեք-Ջարեքի մատնիք խանեց մատնեն, էցգեց ուր մատ. իշկեց օր թաս մի շերպեթ դրուկ էր գլխուն վերև. վերուց կեսը խմեց։ Տղեն իշկելով օր լուսնելու մոտ է, հ՝ելավ սրքթեք զարկեց, էլմը հ՝ելավ պատի գլոխ, իշավ ցած. իշկեց օր աղոթրան կրշողշըղա, առեր է բացվել, մեկ պառավ կնիկ մի հ՝ելեր է դուս.—Ա՜խ, նանե ջան, գիշերը ճամբախ եմ էկեր. կը վախենք օր ճին ու ճանավար ձի չուտե. նանե, շատ նեղած եմ, դուն ու քու աստված, ձի չառնի՞ս նես։

Դարչին գնաց էդ պառվու տուն, պարկավ, քնավ. թագավորը հ՝ելավ խլուսուն. իշկե օր հ՝ի՞նչ տեսնի՝ քառսուն խատ դևի գլոխ կտրած թալած կա էն տեղ։ Թագավորը էտուր դալալ կանչել, թե ո՞ր էս աղեկութեն էրեր է՝ թող գա, ես ուրան աղեկութան կորա աղեկութեն էնիմ ուրին։ Որն օր գնաց, ասաց՝ ես իմ, նշանաբանութեն չըկարցավ տեր։— Պառվու մի տուն էս օր ղարիպ տղե մի էկեր է. գացեք էն տղեն բերեք։

Գացին բերին. տղեն իրեք անգամ թագավորեն թամատար էղավ, կայնավ դեմ։

---

1 Պայուսակ (Ս. Բ.)։

— Որդի՛, դիտե՞ս քեզի ինչի կանչեր բերեր եմ. էս գիշեր քառսուն խատ դև է կտրած, ականջներ առած՝ տարած. դոմն խապար չունի՞ս։

Դարչին թամատար էղավ թագավորին.—Թագավոր սաղ կենա։ Ես եմ,—խանեց քառսուն ջուխտ ականջ խամրեց թագավորին հ՚առեջ,—թե չես հավատար, ըս էլ քու աղջկա մատնիքն է. ստաքանի մեջ լե շերպեթ իլին էր. կեսը խմեր եմ, կեսը թորկեր եմ։

— Որդի՛, թագավորութենը քումը էղնի, անումը իմը։ Աղջիկս տվեցի քեզի։

Քառսուն օր, քառսուն գշեր խարսնիս էրաց։ Իրեք-Չարեքը էտուր Դարչինի։ Կերան խմեցին, զմեզի բարի հիշացին։